

Չենք ուզեր հոս երկարել. գործը անկասկածօրէն հարազատ է, Տա Վինչին ձեռքէն ելած. ասոր համաձայն են իտալիոյ գեղարուեստի բոլոր մասնագէտները:

Պ. Գրիգոր Ահարոն ձեռք ձգած է նաեւ արուեստի ուրիշ թանկագին գործ մը, որ եթէ առաջինն չհաւասարի, սակայն շատ ալ հեռու չի մնար:

Ատիկա կաւէ կիսանդրի մըն է որ դարձեալ Լէոնարտոյ Տա Վինչին կը ներկայացնէ. յատուկ մասնագէտներու վճռով անիկա գործըն է մեծ Վարպետի աշակերտներուն, հաւանօրէն իրեն ժամանակակից: Այս կիսանդրիին գծերն ալ քիչ կը զանազանուին Տա

Վինչիի գծերէն, անոր համար եթէ իրը չէ, անպայման իր ձեռասուն աշակերտներունն է՝ Լոմպարտական դպրոցի գործ:

Ամերիկայի մէջ գնած է Պ. Գրիգոր Ահարոն այս գործն ալ, որ հաւանօրէն առաջինն ոճով Ամերիկա ճամբորդած է հոսկ սեփականութիւնը դառնալու հայու մը:

Մենք կ'ուրախակցինք մեր ազնիւ հայրենակցին և նախկին սանին, ինչպէս որ մեզի հետ ամէն հայ. որովհետեւ փոքր պարծանք մը չէ այդպիսի հանճարի մը գործին սեփականութիւնը որ անգնահատելի դանձմըն է եւ որ միանգամայն կը կազմէ Պ. Գ. Ահարոնի ընտանեկան հարստութիւնը:

ԽՄԲ.



Լէոնարտոյ Տա Վինչի
(Կաւէ կիսանդրի)

ԳԻՕՑ ՖՈՆ ԲԵՐԼԻՇԻՆԳԸՆ

Ե Ր Կ Ա Թ Ա Բ Ա Ջ Ո Ւ Կ

Գրեց՝ ԳԻՕԹԷ

ՔԵԴՐ. ՅԱՎՈՐ-ԳՐԻԳՈՐ

(Շար. տես Բազմավէպ 1931, էջ 180)

Եւրոստիատըզը՝ Գեօրի Գղեակը

Եղեալեթ, Մարիամ, Փոքրիկ Քարլ

Քարլ. — Կ'աղաչեմ, մօրաքոյր, անգամ մ'ալ պատմէ՛ ինծի Բարեպաշտ տղան պատմութիւնը. շատ աղուոր է:

Մարիամ. — Դու պատմէ՛ զայն, փոքրիկ չարածճի, նայիմ լաւ ուշ դրեր ես:

Քարլ. — Քիչ մը սպասէ որ մտածեմ: — Ատենօք մէկը կար... Այո... Ատենօք տղայ մը կար, որուն մայրը հիւանդ էր. այն ատեն տղան գնաց...

Մարիամ. — Ո՛հ: Մայրը անոր ըսաւ. Սիրելի զաւակս...

Քարլ. — Ես հիւանդ եմ...

Մարիամ. — Եւ չեմ կրնար երթալ.

Քարլ. — Յետոյ մայրը գրամ տուաւ տղուն եւ ըսաւ. Գնա՛ նախաճաշիկդ գնէ՛: Այն ատեն աղքատ մ'եկաւ...

Մարիամ. — Տղան մեկնեցաւ, եւ ճամբուն վրայ ծեր մարդու մը հանդիպեցաւ, որ էր... Առաջ տար, Քարլ.

Քարլ. — Որ... ծեր էր:

Մարիամ. — Կը հասկցուի: Որ հագիւ քաղելու կարողութիւն ունէր. որ անոր ըսաւ. Սիրելի տղայ...

Քարլ. — Բան մը տուր. ոչ երէկ եւ ոչ այսօր հաց կերած եմ: Այն ատեն տղան անոր տուաւ դրամը.

Մարիամ. — Որ իրեն նախաճաշիկը գնելու համար պիտի ծառայէր:

Քարլ. — Այն ատեն ծերունին ըսաւ...

Մարիամ. — Այն ատեն ծերունին բռնեց տղուն.

Քարլ. — Չեմքէն. եւ անոր ըսաւ... Այն ատեն նա իսկոյն պայծառափայլ սուրբ մը դարձաւ եւ ըսաւ. Սիրելի տղայ...

Մարիամ. — Տիրամայրը քեզ վարձատրէ իմ ձեռքովս՝ բարեգործութեանդ փոխարէն: Այն հիւանդին որ դաչիս...

Քարլ. — Չեռքովդ... կարծեմ աջ ձեռքով, այնպէս չէ...

Մարիամ. — Այո:

Քարլ. — Իսկոյն պիտի բժշկուի:

Մարիամ. — Այս խօսքերուն վրայ տղան տուն վազեց, եւ ուրախութենէն խօսքը բերանը մնաց:

Քարլ. — Յետոյ մօրը վիզը փաթթուեցաւ ուրախութեան արցունքներով:

Մարիամ. — Այն ատեն մայրը աղաղակեց. Այս ի՞նչ է որ կը զգամ... Եւ... Եւ, ի՞նչ եւ դաւ, Քարլ...

Քարլ. — Եւ եղաւ... Եւ

Մարիամ. — Նայէ՛, ուշադրութիւն դրած չես:

Եւ բժշկուեցաւ: Եւ տղան բժշկեց թագաւորը եւ կայսրը, եւ այնքան հարստացաւ որ մեծ վանք մը շինեց:

Եղիսարէր. — Խելքս չի հասնիր էրկանս ըրաւ ծին: Հինգ օր եւ հինգ գիշեր է որ դուրսն է. կը յուսար վարպետութեամբ լինցնել:

Մարիամ. — Ես միայն այսօրուան համար չէ որ կը վրդովիմ: Եթէ ես դատապարտուած ըլլայի քուկինիդ նման էրիկ մ'ունենալու որ ինքզինքը ամէն վտանգի կը մատնէ, արդէն առաջին տարին մեռած կ'ըլլայի:

Եղիսարէր. — Շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ որ քիչ մ'աւելի քաջասրտութիւն տուած է ինծի:

Քարլ. — Բայց հայրիկս ստիպուած էր մեկնելու երբ այդքան վտանգաւոր է:

Մարիամ. — Ե՛հ, ան իր քմահաճոյքին կը հետեւի:

Եղիսարէր. — Իրաւունք ունիս, սիրելի Քարլ. ան ստիպուած է:

Քարդ. — Ինչո՞ւ:

Եղիաւարք. — Կը յիշե՞ս, վերջին անգամ երբ մեկնեցաւ, քեզի ճերմակ հացիկ մը բերաւ:

Քարդ. — Այս անգամ ալ պիտի բերէ՞ անկից: Եղիաւարք. — Կարծեմ: Կը տեսնե՞ս, Շտուտ-գարտէնի մէջ դերձակ մը կար, ան հիանալի նետաձիգ մըն էր եւ Քէօլնի մէջ մրցանակ շահած էր:

Քարդ. — Արժէքաւոր մրցանակ մ'էր:

Եղիաւարք. — Հարիւր թաւր: Բայց յետոյ մերժեցին զայն անոր տալու:

Մարիամ. — Վատ բան է, այնպէս չէ՞, Քարդ: Քարդ. — Վատ մարդիկ:

Եղիաւարք. — Այն ատեն դերձակը հօրդ եկաւ եւ խնդրեց իրմէ, որ օգնէ իրեն՝ դրամը ստա-նալու: Ու հայրդ իսկոյն ձին հեծաւ, յան-կարծակի յարձկեցաւ քոլոնիացի վաճառա-կաններուն վրայ, անոնցմէ երկուքը բռնեց հետը բերաւ, եւ ազատ չարձկեց զանոնք մին-չեւ որ հարիւր թաւրը չվճարեցին: Հիմա ըսէ՞ ինծի, դուն ըլլայիր նոյնը պիտի չընէիր:

Քարդ. — Ո՛հ, հաւատա՛, ոչ: Սեւ, սեւ անտա-ռէ մը պէտք է անցնիլ, ուր գնչուներ եւ վհուկ-ներ կան:

Եղիաւարք. — Ահա նշանաւոր հերոս մը որ վհուկներէն կը վախէ:

Մարիամ. — Գնա՛, իրաւունք ունիս, Քարդ. զգեսակիդ մէջ բարեպաշտ քրիստոնեայ ասպե-տի մը կեանքը վարէ: Իր իսկ հողերուն վրայ մարդ բարեգործութեան բաւական առիթ կը գտնէ. եւ ամենէն աւելի պարկեշտ ասպետ-ներն ալ աւելի անիրաւութիւն կ'ընեն իրենց արշաւանքներուն մէջ քան թէ զրկեալներուն կ'օգնեն:

Եղիաւարք. — Քոյր իմ, չես գիտեր թէ ինչ կը խօսիս: Տայ Աստուած, որ մեր մանչը ժա-մանակի ընթացքին աւելի արի ըլլայ եւ Հայզ-լինգընին չնմանի, որ ա՛յնքան նենգամիտ վար-մունք ունեցաւ ամուսինիս հետ:

Մարիամ. — Մի անգապարեր գինքը դատելու, եղիսաբեթ: Եղբայրս շատ զայրացած է, ինչ-պէս դուն. ես այս գործին մէջ աւելի պաղա-րուն եմ եւ իրերը լաւ կրնամ դատել:

Եղիաւարք. — Կարելի չէ գինք արդարացնել:

Մարիամ. — Ինչ որ իր մասին իմացայ, զիս ներշնչեց որ իր շահը խորհիմ: Քու մարդդ իսկ չէր պատմեր անոր մասին այնքան լաւ եւ բարի բաներ: Ո՛րքան երջանիկ էր իրենց երիտասարդութիւնը, երբ միասին սահմանա-կալ կոմսին մանկաւարէնէն էին:

Եղիաւարք. — Կրնայ ըլլալ: Բայց ըսէ՛ ինծի, ինչ բարի բան կրնայ ընել այն մարդը, որ իր ամենէն լաւ, հաւատարիմ բարեկամը կը հա-լածէ, որ իմ ամուսինիս թշնամիներուն կը ծախէ այն բազուկները զորս պէտք էր նուի-րագործել անոր պաշտպանութեան համար: Նա որ խաբեպատիր յարաբերութիւններով կը ջանայ զմեզ սեւերեւ ընել մեր վեհափառ կայ-սեր առջեւ՝ որ այնքան մեզ կը սիրէր:

Քարդ. — Հայրիկը, հայրիկը: Աշտարակի գի-նուորը «Բացէք, բացէք դրանդիները» երգը կը փողահարէ:

Եղիաւարք. — Անտարակոյս աւարով է որ կը վերադառնայ:

Զիւառք մը կը մտնէ

Զիւառք. — Լաւ որս ունեցանք: Բարեւ ձեզի՛ տիկիններ.

Եղիաւարք. — Վայզլինգընը բռնեցի՞ք:

Զիւառք. — Զինքը եւ երեք ձիաւորներ:

Եղիաւարք. — Ինչպէս եղաւ որ այսքան ուշ մտայիք:

Զիւառք. — Որովհետեւ Նիւրնբերգի եւ Բամ-բերգի միջեւ դարանակալ սպասեցինք իրեն՝ կարծելով որ այդ ճամբան բռնած ըլլայ: Մենք իրեն սպասեցինք իր անցնելուն, բայց նա չէ՛ր գար: Վերջապէս լուր առինք իր մասին թէ խոտորեր էր իր ճամբէն եւ անհոգ կերպով կը զուարճանար Շուարցընբերգի կոմսին մօտ:

Եղիաւարք. — Զանի ալ կ'ուզէին իմ ամու-սինիս թշնամի դարձնել:

Զիւառք. — Ես իսկոյն կը վազեմ տիրոջ իմա-ցընելու. ան մեզ ձի հեծնել կու տայ, եւ մենք կը մտնենք Հասլախի անտառը: Եւ հոն այն-պիսի հետաքրքրական բան մը հանդիպեցաւ որ կարելի չէ երեւակայել: Մտածէ որ գիշե-րով ձիավարած ատեննիս, հովիւ մը կար ի՞ր հօտով, եւ ահա հինգ գայլ հօտին վրան յար-ձըկեցան եւ ազուր որ կշտացան: Այն ատեն մեր տէրն սկսաւ խնդալ եւ ըսաւ. «Բարի յա-ջողութիւն, սիրելի ընկերներ: Յաջողութիւն ամենուն եւ մեզի ալ»: Մինչ այս ուրախա-ռիթ նշանով կը հրճուէինք, եւ ահա ձիերու աղաղակ մըն է որ կը լսենք. Վայզլինգընն էր որ կու գար՝ չորս գինուորով:

Մարիամ. — Սիրտս կը բաբախէ:

Զիւառք. — Ես եւ ընկերս, տիրոջ հրահանգին համաձայն, գունդին մէջէն գինք կը բռնենք եւ այնպէս լաւ կը փաթթուինք իրեն որ այլ-

եւս կարծես մէկ ըլլայինք իր հետ. ոչ մէկ շարժում կրնար ընել. եւ տէրը ու Հանցը յար-ձակեցան զինուորներուն վրայ եւ յետ թեթեւ դիմադրութեան մը կը զսպեն: Անոնցմէ մէկը կը փախչի:

Եղիաւարք. — Հետաքրքիր եմ Վայզլինգընը տեսնելու: Շուտով կու գա՞ն:

Զիւառք. — Զորէն վեր կ'ելլեն. քառորդ ժամէն հոս են:

Մարիամ. — Անշուշտ շատ ընկճուած պիտի ըլլայ:

Զիւառք. — Շատ մօայլ կերպարանք ունի:

Մարիամ. — Կը զգամ որ իր նայուածքը պիտի սիրտս ցաւցնէ:

Եղիաւարք. — Ա՛հ, կ'երթամ շուտով ճաշը կը պատրաստեմ: Ամէնքդ ալ անօթի պէտք է ըլլաք:

Զիւառք. — Իրաւ է:

Եղիաւարք. — Մարիամ, ա՛ռ մտանին բանա-լին եւ բեր լաւագոյն գինիէն: Արժանի եղան-ատոր: (Կը մեկնի):

Քարդ. — Ես ալ միասին կու գամ, հօրաքոյր:

Մարիամ. — Եկո՛ւր, պզտիկս: (Կը մեկնեն):

Զիւառք. — Ամենեւին հօրը պիտի չնմանի, ապա թէ ոչ ինծի հետ ախոռ կու գար:

Գեօգ, Վայզլինգըն, Զիւառք գինուորներ

Գեօգ (աղաւաղաւ եւ սուրը սեղանին վրայ դնե-լով). — Զրահներս քակեցէք եւ բաճկոնս տուէք: Կարծեմ թէ շատ քաղցր է հանգստու-թիւնը. եղբայր Մարտին, ճիշդ կ'ըսէիր: — Բաւական սպասուցիք մեզ, Վայզլինգըն: Վայզլինգըն (ոչինչ կը պատասխանէ՝ սենեկին մէջ վեր-վար քաշելով)

Գեօգ. — Արի եղէք: Եկէք, զրահնիդ հանեցէք: Ո՛ւր են ձեր զգեստները: (Զինուորներէն մէ-կուն) Կանչէ իր մարդիկը. բացէք ծրարները, ու նայեցէք որ ոչինչ չկորսուի: Զեզի իմին-ներէս ալ կրնայի փոխ տալ:

Վայզլինգըն. — Թող այսպէս կենամ, ամէնը մէկ է:

Գեօգ. — Կրնայի գեղեցիկ, մաքուր հագուստ մը տալ, որ սակայն պարզ կտաւէ է: Ինծի շատ նեղ կու գայ: Յարգելի տիրոջ Յալցի կոմսին, հարսնիքին հագած էի, ճիշդ այն ա-տեն, երբ ձեր եպիսկոպոսը ա՛յնքան թունա-ւից դարձաւ իմ վրայ, որովհետեւ տասնը-ւից դարձաւ իմ վրայ, որովհետեւ տասնը-ւից օր առաջ իր երկու նաւերը ընկղմած էի Մայնի մէջ: Կը յիշեմ, Յարանց Յոն Սիքին-

գընի հետ Հայդըլբերգի «Եղնիկ»ի օթեպանին մէջ էինք. սանդուղէն վեր կ'ելլէինք: Վերն հասնելու համար պէտք էինք անցնիլ սան-դուղի գլուխէն որ շրջանակուած էր երկաթէ բազրիքով մը՝ ուր էր եպիսկոպոսը: Ան ձեռքը Յարանցին տուաւ. եւ որովհետեւ իրմէ վերջ ես կու գայի, նա ինծի ալ տուաւ. ինքնիրենս խնդացի եւ երբ մօտեցայ Հանաուի գաւառա-կալին — իշխան գոր բոլոր սրտովս կը սիրէի — ըսի իրեն. «Եպիսկոպոսը ձեռքը տուաւ ինծի. գրաւ կը բռնեմ, որ ան չճանչցաւ զիս»: Եւ որովհետեւ դիտումով բարձր կը խօսէի, եպիս-կոպոսը զիս լսեց եւ խրոխտ կերպով մեզի եկաւ ու ըսաւ. «Անշուշտ, որովհետեւ ձեզ չճանչցայ, անոր համար ձեռքս տուի»: Այն ատեն ըսի. «Գերապայծառ, ես արդէն շատ լաւ կռահեցի. եւ ես ձեզի կը վերադարձնեմ ձեր ձեռքը»: Այն ատեն մարդուկին վիզը ուռաւ, ու բարկութենէն կաս-կարմիր եղաւ, ինչպէս խեցգետին մը, եւ շուտով գնաց Յալ-ցի կոմսին՝ Լուդուիկի եւ Նասսաուի իշխանին սենեակը՝ որուն տաք տաք պատմեց անցած դարձածը՝ դառնացած զանգատելով իմ մա-սիս: Յետոյ յաճախ ատոր վրայ լաւ մը խըն-դացած ենք:

Վայզլինգըն. — Զէք կրնար արդեօք զիս մի-նակ թողուլ:

Գեօգ. — Ինչո՞ւ համար: Կը խնդրեմ, հանգըս-տացէք: Իմ իշխանութեանս տակն էք եւ ես պիտի չզեղծանիմ անով:

Վայզլինգըն. — Ատ չէ որ զիս անհանգիստ կ'ընէ: Զեր ասպետական պարտքն է այդ:

Գեօգ. — Եւ դուք գիտէք որ ատիկա ինծի համար սուրբ է:

Վայզլինգըն. — Գերի բռնուած եմ. մնացեալը անտարբեր է ինձ համար:

Գեօգ. — Պէտք չէ այդպէս խօսիք: Եթէ այն-պիսի իշխանի մը հետ գործ ունենայիք որ ձեզ աշտարակի մը խորը նետէր, եւ հրաման տար ձեր պահապաններուն որ փող զարնէին ձեր քունն արգիլելու: (Զինուորները՝ հա-գուստներով):

Վայզլինգըն (կը հանուի եւ կը հագուի):

Քարդ ներս կը մտնէ

Քարդ. — Բարի լոյս, հայրիկ:

Գեօգ (կ'ողջագուէրէ). — Բարի լոյս, տղաս: Ժա-մանակն ինչպէս անցուցիք հոս:

Քարդ. — Շատ լաւ, հայրիկ: Հօրաքոյրս ինծի

համար կ'ըսէ որ շատ գիտուն եմ ես:
Գեօգ. — Իրան:
Քարդ. — Ինծի բան բերի՞ր հետդ:
Գեօգ. — Այս անգամ ոչ:
Քարդ. — Մինչ ես շատ աշխատեցայ:
Գեօգ. — Այո:
Քարդ. — Բարեպաշտ տղուն պատմութիւնը
կ'ուզե՞ս լսել:
Գեօգ. — Ճաշէն ետք:
Քարդ. — Ուրիշ բան մըն ալ գիտեմ:
Գեօգ. — Ի՞նչ է որ:
Քարդ. — Եաքստհաուզընը գիւղ մըն է որ դը-
ղեակ մ'ունի Եաքստի վրայ, երկու հարիւր
տարիէ ի վեր կը պատկանի Բերլինգընի
տէրերուն՝ ժառանգաբար եւ որպէս ստաց-
ուածք:
Գեօգ. — Կը ճանչնաս Բերլինգընի տէրը:
Քարդ. (պիշ մը կը նայի անոր):
Գեօգ. (Մեկուսի). — Շատ սորվելուն պատճա-
ռաւ չի՞ ճանչնար իր հայրը: — Որին կը
պատկանի Եաքստհաուզըն:
Քարդ. — Եաքստհաուզըն գիւղ մըն է որ դղեակ
մ'ունի Եաքստի վրայ:
Գեօգ. — Ատիկա չեմ հարցնէր: — Ամէն ուղի-
ները, ճամբաները եւ հունները կը ճանչնայի՞
դեռ առանց գիտնալու թէ գետ, գիւղ եւ բերդ
ինչպէս կը կոչուին: — Մայրիկը խոհանոցն է:
Քարդ. — Այո, հայրիկ: Շաղգամ եփելու հետ
է եւ ոչխար մը խորովելու:
Գեօգ. — Դուն ալ կրնամ, Պարոն խոհարարա-
պետ:
Քարդ. — Եւ իմ աղանդերիս համար հօրաքոյրը
խնձոր մը կը տապկէ ինծի:
Գեօգ. — Չեփած չե՞ս կրնար ուտել:
Քարդ. — Եփածն աւելի համով է:
Գեօգ. — Միշտ համեղաճաշակ բան մը կ'ու-
զես: — Վայզլինգըն, իսկոյն կու գամ: Պէտք
է որ երթամ կինս ողջագուրեմ: Եկուր հետս,
Քարդ:
Քարդ. — Ո՞վ է այդ մարդը:
Գեօգ. — Բարեւէ զինքը: Խնդրէ իրմէ որ քիչ
մ'աւելի գուարթ ըլլայ:
Քարդ. — Ահա, ձեռքս առ: Ուրախ եղիր, ճաշը
շուտով կը պատրաստուի:
Վայզլինգըն (Ձանի բազուկներուն վրայ կ'առնէ
եւ կը համբուրէ). — Երջանիկ տղայ, որ
ուրիշ ցաւ չունի, բայց եթէ ճաշին յապա-
ղումը: Բերլինգընը, Աստուած լիացնէ քեզ
ուրախութեամբ այս տղուն մեջոցով,
Գեօգ. — Ուր շատ լոյս կայ, շատ ալ ստուեր

կայ, բայց բարով թող գայ: Պիտի տեսնենք
թէ ըլլալիքն ինչ է: (Կը մեկնեն):
Վայզլինգըն (մենակ). — Երանի թէ արթնայի
եւ այս ամէնը երազ ըլլար: Բերլինգընի իշ-
խանութեան տակ, որմէ հազիւ ազատած էի
ինքզինքս, որին յիշատակէն այնքան կը վա-
խէի որքան կրակէն, եւ որուն կը յուսայի
յաղթել: Եւ ան, հին բարեկամը, հաւատարիմ
Գէօգը: Աստուած, մեծդ Աստուած, ինչպէս
պիտի վերջանայ այս ամէն բան: Աղբերտ,
ահա կը վերադառնամ այն դահլիճը՝ որ թա-
տերասրահն եղաւ մեր մանկական խաղերուն
... Երբ դուն զինքը կը սիրէիր... Ինչ կ'ը-
սեմ... երբ իր կեանքը կ'ապրէիր, երբ հոգիդ
իր հոգւոյն հետ կը խառնուէր: Ո՞վ կրնայ ա-
նոր մօտենալ եւ տեսլ զինքը: Եղովի ինձ. ես
հոս այլեւս ոչինչ մըն եմ, ոչինչ մը: Բախ-
տաւոր ժամանակներ, անցած էք, երբ հրեշ-
տակի պէս իրարու հոգի կու տայինք: Մե-
րունի Բերլինգընը դեռ կ'ապրէր: Կարծես
թէ զինք կը տեսնեմ, հոն, վառարանին մօտ,
մինչ մեզ կը գիտէր երբ իր շուրջը կը խա-
ղայինք: Ահ, ինչպէս պիտի ցաւի եպիսկո-
պոսը, ինչպէս նաեւ բոլոր բարեկամներս: Գի-
տեմ որ ամբողջ գաւառը կը մասնակցի իմ
թշուառութեանց: Բայց ինծի ինչ օգուտ. կըլ-
նան տալ ինծի այն զոր կը փնտռեմ:
Գեօգ. (չիշ մը գլինով եւ բաժակներով). — Մին-
չեւ որ ճաշը պատրաստ ըլլայ կը խմենք համ
մը: Եկէք, նստեցէք, որպէս թէ ձեր տունն
ըլլայիք: Մտածեցէք թէ դարձեալ Գէօգի
տունն էք: Երկար ատեն է որ սեղանակից
չենք եղած, եւ միասին չիշ մը պարպած: (Կը
հրամայէ որ խմէ): Օ՛հ, քիչ մը գուարթու-
թիւն:
Վայզլինգըն. — Ժամանակները փոխուած են:
Գեօգ. — Հէ՛յ. իրաւ է որ այլեւս չենք կրնար
վերստին գտնել այն օրերը որ միասին ապրե-
ցանք սահմանապահ կոմսին արքունիքին մէջ,
երբ երբեք զիրար չէինք լքեր ոչ ցորեկ, ոչ
գիշեր: Հաճոյքով կը յիշեմ պատանեկութիւնս:
Կը յիշէք դեռ կատաղութիւնը այն լեհին՝ ո-
րուն օծուած պիւները կը խանգարէի թեզանի-
քովս՝ ակամայ:
Վայզլինգըն. — Այո, ճաշին էր, եւ ան սպառ-
նացաւ ձեզի դանակով:
Գեօգ. — Այն ատեն ես իրեն չոր դաս մը տուի՝
եւ ատոր վրայ դուք իր ընկերոջը հետ մէկ-
տեղ գժտուեցաք: Մենք միշտ նեցուկ էինք
իրարու որպէս անկեղծ, քաջ տղաքներ, եւ

այդ բանը ամէն մարդ լաւ գիտէր: (Կը լեցնէ
եւ կը տնկէ): Քաւթոր եւ փոլուէ. ինչպէս
սիրտս կը բաբախէ՞ր ուրախութենէս երբ կոմ-
սը մեզ այսպէս կը կոչէր:
Վայզլինգըն. — Վերցրուրդի եպիսկոպոսն էր
որ մեզ այդ անուններով էր մկրտած:
Գեօգ. — Գիտնական մարդ մըն էր, եւ միան-
գամայն այնքան քաղցրաբարոյ: Պիտի յիշեմ
որքան ատեն որ կ'ապրեմ, թէ ինչպէս մեզ
կը սիրէր, որքան կը դուռատէր մեր միու-
թիւնը, եւ կ'ըսէր թէ կը յարգէր այն մարդը
որ իր բարեկամին եղբայրն է:
Վայզլինգըն. — Բաւական է, կ'աղաչեմ:
Գեօգ. — Ինչո՞ւ համար: Աշխատանքէն ետք ու-
րիշ հաճելի բան մը չեմ ճանչնար կեանքիս
մէջ՝ քան յիշատակները: Անշուշտ, եթէ վե-
րստին կը մտածեմ այնքան սերտ բարեկամու-
թեան օրեր, ուր սէր եւ վիշտ միասին կրե-
ցինք, երբ կը յիշեմ թէ ինչ հմայքով կը
սնուցանէի այն գաղափարը թէ նոյնպէս պի-
տի ըլլար մեր ամբողջ կեանքի ընթացքին:
Այն ատեն չեղաւ իմ միւթարութիւնս, երբ
այս ձեռքս զարնուեցաւ Լանդսհուտի առջեւ
եւ դուն զիս կը խնամէիր. դուն ինծի համար
եղբորէ մը աւելի բան մ'էիր. կը յուսայի,
որ Աղբերտ այնուհետեւ աջ ձեռքս պիտի ըլ-
լար: Եւ հիմա...
Վայզլինգըն. — Ո՛հ:
Գեօգ. — Ինչո՞ւ իմ աղաչանքներուս մօտիկ չը-
րիր, երբ ուզեցի քեզ Պրապանթ տանիլ: Այս-
օր ամէն ինչ այնպէս պիտի ըլլար՝ ինչպէս
այն ատեն: Բայց պալատական կեանքը քեզ
փճացուց. ընկղմած եղկելի հնարագիտութիւն,
ներու մէջ, մեղկացած կիներու հետ յարա-
բերութիւններով, դուն մոռցար քու բարե-
կամը: Ես միշտ քեզի կ'ըսէի, երբ քեզ կը
տեսնէի որ ուրացած քու պարկեշտութիւնդ՝
ետեւէն էիր այդ թեթեւ ու անամօթ արա-
րածներուն, երբ դու իրենց հետ էիր գարշելի
յարաբերութիւններով, բոգերու հետ, չարա-
խօսելով բացակաները, զբօսնելով մէկուն թուի-
գոյնով, միւսին կոշտ մորթին վրայ, ես ինչ
գիտնամ. ինչ որ մոռներէն կ'անցնէր քեզի ըսե-
լու. Աղբերտ, ես միշտ քեզի կը կրկնէի թէ
սրիկայ մը պիտի ըլլաս:
Վայզլինգըն. — Այս ամէն բանի նպատակը...
Գեօգ. — Տայր Աստուած որ մոռնայի ասոնք,
կամ ուրիշ կերպ եղած ըլլային: Միթէ այն-
քան ազատ, ազնիւ ծնած չե՞ս ինչպէս ամէն
Գերմանացի, անկախ, միայն Կայսրին հպա-

տակ: Եւ սակայն դուն կը խոնարհիս ստրուկ-
ներու: Դուն ի՞նչ գործ ունիս եպիսկոպոսին
հետ: Որովհետեւ դրացիդ է, կամ քեզ կրնայ
վնասել անոր համար: Միթէ սուր մը եւ բա-
րեկամներ չունի՞ս անկէ վրէժ առնելու: Ո՛հ,
գուն անզգայ մը պիտի ըլլաս արժանապա-
տութեան հանդէպ ասպետին՝ որ միայն Աս-
տուծմէ, իր Կայսրէն եւ իր անձէն կախուած
է՝ եթէ ինքզինքդ ճորտն ընես քահանայի մը
գոր ամբարտաւանութիւնն ու եցուցեր է եւ
նախանձը կրճուտեր է:
Վայզլինգըն. — Ձգեցէք որ խօսիմ:
Գեօգ. — Ի՞նչ ունիս ըսելիք:
Վայզլինգըն. — Դու նոյն աչքով կը դիտես
իշխանները, ինչպէս գայլը հովիւը: Եւ սա-
կայն պէ՞տք է որ դու կշտամբես զիրենք, որ ի-
րենց ժողովուրդներուն բարօրութեան համար
կը հսկեն: Միթէ վայրկեան մ'իսկ ապահով
են հարուածներէն անիրաւ եւ անհաւատ աս-
պետներուն, որոնք ամէն մեծ ճամբաներուն
վրայ կը յարձակին անոնց հպատակներուն
վրայ, զիւղերնին եւ դղեակնին աւարի են-
թարկելով: Երբ միւս կողմէ մեր սիրելի կայ-
սեր երկիրները սպառնալիքին տակն են ան-
հաւատներուն՝ որոնք կ'ուզեն որ դիմէ: Կայ-
սրութեան պետութիւններուն. բայց անոնք
հազիւ կրնան կեանքերնին պաշտպանել այդ
աւագակներէն: Միթէ բարի ոգի մը չե՞ որ
անոնց կը ներշնչէ, միջոցներ խորհիլ՝ Գերմա-
նիան հանդարտեցնելու, ուժ տալ արդարու-
թիւնը պաշտպանելու համար, որպէսզի ամէն
ոք մեծ ու պզտիկ տեւական խաղաղութեան
բարիքները վայելէ: Դուն մեզ կը պարտաւս
որ նեցուկ կը փնտռենք մեր դրացիներէն, Բեր-
լինգըն, տես կայսերական Վեհափառու-
թիւնը. ան մինակ է, եւ անգոր ինքզինքը
պաշտպանելու:
Գեօգ. — Այո, այո, կը հասկնամ: Վայզլինգըն,
եթէ իշխանները ըլլային այնպէս, ինչպէս որ
դուք զիրենք կը նկարագրէք, այն ատեն կ'ու-
նենայինք ամէնքս ալ այն ինչ որ կը փա-
փաքինք. հանգստութիւն եւ խաղաղութիւն:
Կը հաւատամ. զիշակեր թոշուն մը չկայ որ
չփափաքի իր որսը հանգստեամբ յօշոտելու:
Իրենց ժողովրդեան բարեկեցութիւնը... ա-
նոնք ուրիշ հոգ չունին կարծես, եւ մագերինն
պիտի չճերմկի: Եւ մեր Կայսրին հետ՝ որուն
մասին կը համարձակին խօսելու՝ կը խաղան
յետին անպատկառութեամբ: Անոր դիտաւո-
րութիւններն սքանչելի են, եւ միայն բարին

է որ իբր նպատակ դրած է ան: բայց ամէն օր նոր արկածախնդիր մը կու գայ եւ խորհուրդներ կու տայ: Եւ որովհետեւ նա իսկոյն կը հասկնայ, եւ իր մէկ խօսքը կը բաւէ որ հազար ձեռքեր շարժումի մէջ դնէ, կը կարծէ թէ ամէն բան կարելի է այդպէս շուտ եւ դիւրին գործադրել: Այն ատեն որոշում որոշումներու վրայ կը տեղայ: մէկը միւսը կը մոռցնէ. եւ իշխանները այդ բոլոր հրամաններուն մէջէն զայն կ'ընտրեն որ իրենց ծրագիրներուն նպատակը կը տեսնեն. եւ այդ պատէշին ետեւ ծածկուելով՝ հանգստեամբ կը ջախջախեն փոքրերը, կայսրութեան անդորրութիւնն եւ ապահովութիւնը հռչակելով: Կ'երդնում որ շատեր սրտով շնորհակալ են Աստուծոյ, որ թուրքը վարժ եւ արթուն կը պահէ կայսրը:

Վալդիկըն. — Ատիկա ձեր տեսակէտն է:

Գեօգ. — Ամէն ոք իրենն ունի: Խնդիրը հոն է, թէ որո՞նք կողմն է լոյսն եւ արդարութիւնը. եւ պէտք է խոստովանիք գոնէ թէ ձեր շարժումները լոյսն կը վախնան:

Վալդիկըն. — Ուզածնիդ կրնաք խօսիլ, ես բանտարկեալ եմ:

Գեօգ. — Ո՛հ, եթէ խղճմտանքնիդ մաքուր է, ազատ էք: Բայց ո՞ր հասարակաց խաղաղութիւնը: Կը յիշեմ, տասնըվեց տարեկանիս, երբ սահմանապահ կոմսին հետ կայսերական ժողովին ներկայ էի: Պէտք էր տեսնել թէ ձեր իշխանները ինչպէս իրենց բերանները լայն կը բանային, եւ լսէիք իրենց ատենախօսութիւնները եւ մասնաւորապէս եկեղեցականները: Ձեր եպիսկոպոսը կայսրին աւանջները ազմուկով կը լեցնէր, կարծես թէ հրաշքով արդարութիւնը ծնած ըլլար սրտին մէջ. եւ անա իմ ճորտերէս մին կը յափշտակէ ինծմէ ան ատեն՝ երբ կռիւնիս դադրած էր եւ ես այլեւս իր մասին չէի խորհիր: Ամէն ինչ լըմընցած չէ՞ր մեր մէջ: Ի՞նչ կարգադրելիք կայ այս բանտարկեալին հետ:

Վալդիկըն. — Այդ բանը առանց իր գիտնալուն պատահեցաւ:

Գեօգ. — Ուրեմն ինչո՞ւ ազատ չարձակել զանի: Վալդիկըն. — Որովհետեւ չվարուեցաւ ինչպէս որ պէտք էր:

Գեօգ. — Չվարուեցաւ ինչպէս որ պէտք էր: Կ'երդնում, ըրաւ ինչ որ պէտք էր. եւ վստահ եմ որ ձեր եւ եպիսկոպոսին լրտեսումով էր որ ձեռքէս խլեցին զանի: Կը կարծէք, որ ա՛յսօր աշխարհ կու գամ, որպէսզի չկրնամ տեսնել թէ ո՞ր կ'երթայ այս ամէն բան: Վալդիկըն. — Ձեր կասկածներն անարգար են:

Գեօգ. — Վալդիկըն, ըսեմ մտածածս առանց քաշուելու: Շատ փոքր բայց եւ այնպէս ձեր աչքերուն մէջ փուշ մըն եմ, Սեբինգըն ու Սելբիցն ալ ձեզ կը նեղեն. ինչո՞ւ, որովհետեւ կորովի կերպով որոշած ենք մեռնիլ, քան Աստուծոյ գաղտնիքին շնորհապարտ ըլլալու այս օդին համար՝ զոր կը շնչենք, եւ հաւատարմութիւն ընծայելու կայսրէն գաղտնիքներու: Ահա չեն դադրիր ինծի որոգայթներ լարելէ, ամենէն աւելի թուի գոյներով կը նկարեն զիս Նորին Վեհափառութեան մօտ, բարեկամներուն ու իմ գրացիներուն: անոնք զիս կը շրջապատեն լրտեսներով: Երբ մօքեր ինչ որ երբ եմ զիս մէջտեղէն վերցնել, ամէն միջոց լաւ է իրենց համար: Գուք այս երկու տասարդ գերի բռնեցիք, որովհետեւ գիտէիք, որովհետեւ զինքը պատգամաւորութեան մը որովհետեւ զինքը պատգամաւորութեան մը սահմանած էի. եւ ան չըրաւ, ինչ որ պէտք էր ընել, որովհետեւ ան զիս չմատնեց ձեզի: Եւ դուն, Վալդիկըն, անոնց գործիքն ես:

Վալդիկըն. — Բերլինցըն:

Գեօգ. — Այս նիւթին շուրջ այսքանը կը բաւէ: Բացատրութիւններու երդուեալ թշնամի եմ: Մէկը կամ միւսը կը խաբուի, եւ յաճախ երկուքն ալ:

Քարլ. — Ճաշի, հայրիկ:

Գեօգ. — Ուրախ լուր: Եկէք, կը յուսամ, թէ իմ կնիկ-մարդիկս քիչ մը սիրտդ պիտի ուրախացնեն: Ատենով պզնիւ ասպետ մըն էիք. միայն դուք էիք օրիորդներուն բերանը: Եկէք (կը մեկնեն):

ԵՐԿՀԱՋԱՐԱՄԵԱԿ ՄԸ

(Շար. տես Բազմ. 1931, էջ 170)

Գ. — ՎԱՐՊԵՏՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԸ

(ՎԻՐԳԻԼԻՈՍ ԵՒ ՏԱՆԴԷ)

Բ.

Տանդէի գերաշխարհիկ Քերթուածէն հետեւցնելով, յուսալի է որ Վիրգիլիոս՝ իրեն յանձնուած ծանր պաշտօնը խղճմտօրէն կատարելէն յետոյ, այլեւս չպարտաւորուեցաւ վերադառնալու առկախ ստուերներու պարունակին մէջ, ուրկից Բէաւորիկին ինդիրըով դուրս ելած, հեռացած էր, որպէս զի իր Աշակերտը աչքովն իսկ տեսնէր ժամանակաւոր եւ յաւիտենական կրակին մէջ տառապողները եւ այդ օրինակներէն զգաւտացած, ուղղէր իր ընթացքը:

Հարկ եղաւ, ուստի, Ենէականէն եւ Ողիսականէն աւելի արկածալից ճամբորդութիւն մը ձեռնարկել. Լիմպոսէն յետոյ զԺոխքին պարունակները մի առ մի այցելելով իջնել Դիւսպետին բուն իսկ բնակավայրը, այսինքն իններորդ ամենախոր պարունակը, ուր են, նաեւ ըստ Տանդէին, բարերարներու դէմ ապերախտ եւ դաւաճան մատնիչները եւ հայրասպանները:

Սակայն եթէ Տանդէին դիւրին եղաւ Դիոխքին մուտքը, տագնապալից պիտի ըլլար անկէ դուրս ելլելը՝ զոր Վիրգիլիոս շատ զիտաւոր եւ հակիրճ լուծած է, դիմելով Դիցաբանութեան, ըստ որուն, Դիոխքը, Կիմմերեան Աշխարհին Լեթէ անուն գետին մօտաւոր «Դրունք Քնոյ» կոչուած երկու մուտք ունէր, «շուրջ գնդվաւ խուրձս մեկոնից եւ հոյլս երազոց»: Այս հնարքով, Լատին Քերթողահայրը,

Սիրիլլային ներկայութեանը, Ենէասին հօրը կարգ մը յայտնութիւններ տալէն եւ

Չըստորերկրեայ շուրջ դիտելով ընդհանուր.

երեքը միասին կը հասցնէ այդ նշանաւոր դռներուն.

Քընոյ դըրունք են երկուորեակ, յորոց մին է եղջերեայ, որպէս պատմեն, եւ դիւրին Տալ ելս ըստոյգ էից. իսկ միւսն ըսպիտակ կերտեալ ժանեօք փղղաց փայլէ գերունակ. Այլ ընդ այն դիքն անդընդայինք ի յերկիր Յըդեն գերագոյս ի վեր ըզտուտս եւ զանիր: Սիրիլլային արդ եւ Ենեայ զայս այսպէս Բացատրելով անդաւոր հայրն Անքիսէս, Չնոսա ի բաց ընդ փղղոսէրեայն արձակէր:

Ենէակ. գլ. 2. (1317-1325)

Եւ գերպ. Հիւրմիւզեան հետեւեալ ծանօթութիւնը կը յաւելու, զգացնել տալու համար թէ Վիրգիլիոս ո՞րքան քիչ հաւատք կ'ընծայէր այդ առասպելախառն գրոյցներուն՝ «եւ ընդ փղղոսիւրեայն ի բաց արձակէ զԵնէաս, յայտ իմն այսպէս առնելով, զի առասպելք են ամենայն որ ինչ զգոխոց պատմեալ ի նմանէ վէպը»:

Մինչդեռ Տանդէն նոյնքան հեշտիւ եւ անաշխատ չյաջողեցաւ ինքզինքն ու իր վարպետը Դիոխքին ի բաց արձակելու: Ընդհակառակն, քանի խորը կ'իջնէր, այնքան աւելի զժուարութիւններ կը յարու-